Հավելված N 1
ՀՀ կառավարության 2010 թվականի
ապրիլի 8-ի N 382 - Ն որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՀԱՎԱՔ» ՀԱՄԱԺՈՂՈՎԻ

I. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1960 թվականից սկսած՝ սփյուռքահայ բազմաթիվ երիտասարդներ կրթություն են ստացել Հայաստանի բուհերում: Այսօր Հայաստանի Հանրապետության բարձրագույն և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորում է շուրջ 3500 սփյուռքահայ երիտասարդ:

Հայաստանի բուհերի սփյուռքահայ շրջանավարտները քաջատեղյակ են սփյուռքում և Հայաստանում առկա հոգեբանական, սոցիալական, իրավական խնդիրներին, ուստի, նրանց փորձը կարող է օգտակար լինել դրանց լուծմանն առավելապես աջակցելու, ինչպես նաև Հայաստան-սփյուռք գործակցության զարգացման գործում:

Կարևոր է նաև սփյուռքահայ շրջանավարտների օրինակն արտերկրում բնակվող հայ երիտասարդներին դեպի Հայաստանի բուհերը գրավելու, հայրենիքի հետ նրանց կապերն ամրապնդելու և սփյուռքում ուծացման դեմ պայքարելու տեսանկյունից:

«Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատությունների սփյուռքահայ շրջանավարտների հավաք» համաժողովն անցկացվելու է Երևանում, 2010 թվականի սեպտեմբերի 20-22-ը:

II. ՀԱՎԱՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հավաքի հիմնախնդիրներն են՝

1) Հայաստան-սփյուռք գործակցության զարգացման, հայապահպանության և համայնքների հիմնախնդիրների լուծման գործում Հայաստանի բուհերի սփյուռքահայ շրջանավարտների դերի ու մասնակցության քննարկումը.

2) Հայաստանում սովորող սփյուռքահայ ուսանողների սոցիալական, իրավական և այլ կարգի հիմնախնդիրների վերհանումը, դրանց լուծման մեխանիզմներն առաջարկելը.

3) սփյուռքահայ շրջանավարտների՝ իրենց բնակության երկրներում հետբուհական խնդիրների վերհանումը.

4) սփյուռքում պահանջարկ ունեցող բարձրագույն և միջին մասնագիտական կրթության ընդլայնման հնարավորությունների քննարկումը, մասնավորապես, Հայաստանի Հանրապետության բուհերում և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում պետական պատվերի շրջանակներում անվճար տեղերի հատկացման միջոցով.

5) Հայաստանի Հանրապետության բուհերում գործող մասնագիտական կրթական ծրագրերի մասին տեղեկատվության տարածման և գովազդման մեխանիզմների մշակումը.

6) Հայաստանում կրթություն ստացող սփյուռքահայ ուսանողների օգնության ֆոնդի ստեղծման և Երևանում «Սփյուռքահայ ուսանողի տուն» հանրակացարանի կառուցման հարցերի քննարկումը։

III. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ակնկալվող արդյունքներն են՝

1) Հայաստանի բուհերի սփյուռքահայ շրջանավարտների համահայկական ընկերակցության ստեղծումը.

2) սփյուռքահայ շրջանավարտների՝ գոյություն ունեցող միությունների գործունեության ակտիվացումը և համակարգումը.

3) հայկական սփյուռքի ներուժի համախմբումը, հայ համայնքներում հայապահպանական նոր ծրագրերի մշակումը, իրականացումը, մայր հայրենիքի հետ հայ համայնքների կապերի ամրապնդումը և խորացումը.

4) Հայաստանի Հանրապետության բուհերի կողմից առաջարկվող մասնագիտական կրթության ծրագրերի մասին տեղեկատվության տարածմանն ու գովազդմանն օժանդակելը.

5) Հայաստանի Հանրապետության բուհերում սովորող ուսանողներին սոցիալական, իրավաբանական և այլ կարգի օժանդակության ծրագրերի իրականացումը, դրանց ֆինանսական աջակցության կազմակերպումը։

IV. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ մրցութային եղանակով ընտրված կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության պատվերով իրականացնելու է հավաքի կազմակերպչական աշխատանքները։

V. ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

«Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատությունների սփյուռքահայ շրջանավարտների հավաք» ծրագրի իրականացման համար պահանջվող գումարը կազմում է 6.600.000 դրամ։

Ն Ա Խ Ա Հ Ա Շ Ի Վ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ
ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՀԱՎԱՔ» ՀԱՄԱԺՈՂՈՎԻ

Անվանումը	Բնութագիրը	Չափի միավորը	Միավորի գինը (դրամ)	Քանակը	Ընդամենը (դրամ)
1	2	3	4	5	6
Նիստերի դահլիճ՝ 1 օրվա համար	նախատեսված՝ 250-300 մարդու համար, աթոռների դասավորությունը՝ թատրոն, սուրճի և ճաշի ընդմիջման կազմակերպման հնարավորություն	հատ/օր			
Նոթատետր (A5)	թուղթը՝ A5 ֆորմատի, 80-90 գ, տպագրությունը՝ 1+0, կազմը՝ A5 ֆորմատի, թուղթը՝ 250 գ, տպագրությունը՝ 4+0	հատ	600	300	180000
Ծրագրի և մասնա-կիցների ցանկի համակարգչային ձևավորում և տպագրություն	թուղթը՝ 90 գ, A5 ֆորմատի, էջերի թիվը՝ 20, տպագրությունը՝ 1+1, կազմի թուղթը՝ 260 գ, տպագրությունը՝ 4+0	հատ	1000	300	300000
Հավաքի զեկույցները պարունակող գրքի տպագրություն	թուղթը՝ A5 ֆորմատի, 80-90 գ, տպագրությունը՝ 1+0, կազմը՝ A5 ֆորմատի, թուղթը՝ 260 գ, տպագրությունը՝ 4+0	օրինակ	2000	300	600000
Հրավիրատոմսի հա-մակարգչային ձևավո-րում և տպագրություն	թուղթը՝ 260 գ, A5 ֆորմատի, տպագրությունը՝ 4+1, ծրարով	հատ	200	300	60000
1	2	3	4	5	6
Անվանաքարտեր	չափը՝ 90 մմ x 60 մմ, տպագրությունը՝ 4+0, թաղանթապատ, կախիչով	հատ	200	300	60000
Թղթապանակ	պլաստիկե, միջին չափի՝ A 4 չափի նյութերի համար	հատ	800	250	200000
Գրիչ	հասարակ	հատ	50	300	15000
Անվանաքարտի համակարգչային ձևավորում և տպա-գրություն	A3, գունավոր, լոգոյով, տպագրությունը՝ 4+0	հատ	3000	50	150000
Անվանաքարտի համակարգչային ձևավորում և տպա-գրություն	1300 մմ x 2000 մմ, տպագրությունը՝ 4+0	հատ	15000	3	45000
CD-ի պատրաստում	հավաքի նյութերի ձայնագրում և բազմացում	հատ	400	300	120000
Սուրճի ընդմիջում	մեկ անգամ, թխվածք, ըմպելիքներ, սուրճ, թեյ	մարդ/օր	1500	300/3	1350000

Ճաշի ընդմիջում,	օրական՝ մեկ անգամ, 2 օր, 250 անձի համար	մարդ/օր	3600	250/2	1800000
Պաշտոնական ընդունելություն	հանդիսավոր ընթրիք՝ հավաքի մասնակիցների պատվին	մարդ	4 400	250	1100000
Տրանսպորտային ծախսեր այցելություն Սևան- Դիլիջան- Գոշավանք	Հաշվարկվել է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կայքում տեղադրված տրանսպորտի ուղեվարձի հիման վրա, որտեղ Երևան- Դիլիջան ուղերթի գինը մեկ անձի համար սահմանված է 1000 դրամ։ 250 մարդու համար	ուղերթ	100000	5	500000
Այլ ծախսեր	հուշակոթողներ այցելության համար ծաղկեպսակներ՝ 250-300 մարդու հաշվարկով	դրամ	95000	1	95000
Ընդամենը					6600000

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2010 թվականի
ապրիլի 8-ի N 382 - Ն որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՖԻՆԱՆՍԻՍՏՆԵՐԻ ԵՎ ԲԱՆԿԻՐՆԵՐԻ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ

I. ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՆՊԱՏԱԿԸ

Համաժողովի նպատակն է աշխարհասփյուռ հայ բանկիրների և ֆինանսիստների ներուժի համախմբումը, Հայաստան-սփյուռք համագործակցության արդյունավետության բարձրացման մեխանիզմների մշակումը, ֆինանսիստների և բանկիրների համահայկական ընկերակցության ստեղծումը և դրա հիման վրա մասնագիտական ցանցի ձևավորումը, համահայկական բանկի կայացմանն աջակցությունը։

II. ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Համաժողովի հիմնախնդիրներն են՝

1) հայկական պետականության ամրապնդման և հայկական սփյուռքի զարգացման խնդիրների լուծմանն ուղղված՝ Հայաստանի Հանրապետության և սփյուռքի մտավոր, մասնագիտական կարողությունների ու ջանքերի համախմբումը.

2) Հայաստան-սփյուռք գործակցության զարգացման, հայկական սփյուռքի հիմնախնդիրների լուծման աջակցության գործում հայազգի ֆինանսիստների և բանկիրների դերակատարության ավելացմանը նպաստելը.

3) սփյուռքի ֆինանսական, վարկային կազմակերպությունների, բանկային տարբեր համակարգերում գործող առանձին անհատների ու Հայաստանի Հանրապետության համապատասխան կազմակերպությունների և անհատների միջև կապերի հաստատմանն ու զարգացմանը նպաստելը.

4) Հայաստանի բանկային և ֆինանսական համակարգերում առկա իրավական, ռազմավարական և այլ կարգի հիմնախնդիրների վերհանումը, դրանց լուծման մեխանիզմների, նշված համակարգերում արդյունավետ կառավարման մեխանիզմների ներդրման և միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով մշակումը.

5) համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությունը Հայաստանի Հանրապետության ֆինանսատնտեսական ոլորտի ներկա իրավիճակի և զարգացման հեռանկարների վրա.

6) ֆինանսիստների և բանկիրների համահայկական ընկերակցության դերը Հայաստանի Հանրապետության տնտեսական ռազմավարական ծրագրերի իրականացման (Հայաստանի Հանրապետության նոր ատոմակայանի, Իրան-Հայաստան երկաթգծի կառուցում, Համահայկական բանկի կայացում և այլն) և Հայաստանի տնտեսության համապատասխան ոլորտներում ներդրումային ծրագրերի իրականացման գործում.

7) Հայաստանի ֆինանսատնտեսական համակարգի ներգրավվածության աստիճանը միջազգային ֆինանսական-տնտեսական համակարգում, դրա խորացման հեռանկարները և Հայաստանի՝ տարածաշրջանային ֆինանսական կենտրոն դառնալու հեռանկարների հայեցակարգային հիմնադրույթների հստակեցումը.

8) տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման արդյունավետության բարձրացման խնդիրները բանկային ծառայությունների մատուցման ենթատեքստում.

9) Հայաստանի տնտեսական անվտանգության խնդիրներն ու հեռանկարները։

III. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ակնկալվող արդյունքներն են՝

1) համաժողովի անցկացումը.

2) ֆինանսիստների և բանկիրների մասնագիտական համահայկական ընկերակցության ստեղծումը, կանոնադրության հաստատումը, մասնագիտական համացանցի ստեղծումը.

3) Հայաստան-սփյուռք կապերի ամրապնդումը, Հայաստանի ֆինանսաբանկային ոլորտի զարգացումը.

4) Համահայկական բանկի կայացման հենքի ստեղծումը։

IV. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Ծրագրի իրականացման իրավական հիմքերն են՝

1) Հայաստանի Հանրապետության Նախագահի նախընտրական ծրագիրը.

2) Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թվականի փետրվարի 7-ի «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին» ՆՀ-37-Ն հրամանագիրը.

3) Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 11-ի «Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N 1049-Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության կանոնադրական դրույթները.

4) Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրն ու գերակա խնդիրները հաստատելու մասին» N 1523-Ն որոշումը։

V. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

1. Ծրագիրն իրականացվում է պետական, մասնավոր և հասարակական հատվածների սերտ համագործակցությամբ՝ որպես պետական աջակցություն Հայաստան-սփյուռք գործակցության խթանմանն ու զարգացմանը։

2. Համաժողովը, որին մասնակցելու են աշխարհասփյուռ հայ ֆինանսիստները և բանկիրները, անցկացվում է 2010 թվականի աշնանը։

3. Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարությանը հատկացված Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներով կազմակերպվում է ծրագրի իրականացման շրջանակներում նախատեսված համաժողովի անցկացումը՝ տպագրական նյութերի պատրաստումը, մասնակիցների՝ տրանսպորտային միջոցներով փոխադրումը, սննդի կազմակերպումը, համաժողովի ընթացքում քննարկումների և կլոր սեղանների անցկացումը։

VI. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

1. Համաժողովը կազմակերպում է Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարությունը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի և Հայաստանի Հանրապետության բանկերի միության հետ համատեղ։

2. Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարությունը հանդես է գալիս որպես սույն ծրագրի իրականացման աշխատանքները համակարգող պետական մարմին։

VII. ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

Ծրագրի ֆինանսավորումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին։ Ֆինանսիստների և բանկիրների համահայկական առաջին համաժողովի անցկացման համար պահանջվող գումարը կազմում է 3.000.000 դրամ։

Ն Ա Խ Ա Հ Ա Շ Ի Վ

ՖԻՆԱՆՍԻՍՏՆԵՐԻ ԵՎ ԲԱՆԿԻՐՆԵՐԻ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ

Անվանումը	Բնութագիրը	Չափի միավորը	Միավորի գինը (դրամ)	Քանակը	Ընդամենը (դրամ)
1	2	3	4	5	6
Նիստերի դահլիճ՝ 1 օրվա համար	նախատեսված՝ 100-130 մարդու համար, աթոռների դասավորությունը՝ թատրոն, սուրճի և ճաշի ընդմիջման կազմակերպման հնարավորություն	հատ/օր	220000	1/1	220000
Համաժամանակյա թարգմանչական սարք	անլար համաժամանակյա թարգմանության ռադիոալիքային ականջակալներ և խոսափողներ՝ 120 անձի համար	լրակազմ	210000	1	210000
Թարգմանիչներ, համաժամանակյա 4 լեզվով թարգմանության ապահովում	մեկ լեզվով համաժամանակյա թարգմանության համար 1 օրվա արժեքը՝ 160000 դրամ հաշվարկով	դրամ	640000	1	640000
Նոթատետր (A5)	թուղթը՝ A5 ֆորմատի, 100-120 գ, տպագրությունը՝ 1+0, կազմը՝ A5 ֆորմատի, կաշվե, տպագրությունը՝ 4+0	հատ	2000	120	240000
1	2	3	4	5	6
Համաժողովի ծրագիր (A5) 12 էջ	թուղթը՝ 120 գ, A5 ֆորմատի, էջերի թիվը՝ 12, տպագրությունը՝ 1+1, կազմի թուղթը՝ 250 գ, տպագրությունը՝ 4+0	հատ	900	120	108000
Մասնակիցների ցուցակ (A5)՝ մինչև 12 էջ	թուղթը՝ 90 գ, A5 ֆորմատի, էջերի թիվը՝ 12, տպագրությունը՝ 1+1, կազմի թուղթը՝ 250 գ, տպագրությունը՝ 4+0	հատ	300	100	30000
Հրավիրատոմսի համակարգչային ձևավորում և տպագրություն	թուղթը՝ 260 գ, A5 ֆորմատի, տպագրությունը՝ 4+1, ծրարով	հատ	200	120	24000
Անվանաքարտեր	չափը՝ 90 մմ x 60 մմ, տպագրությունը՝ 4+0, թաղանթապատ, կախիչով	հատ	300	120	36000
Թղթապանակ	պլաստիկե, միջին չափի՝ A4 չափի նյութերի համար	հատ	800	120	96000
Գրիչ	գելային, 0.5-1.0 ծայրով	հատ	150	120	18000
Անվանաքարտի համակարգչային ձևավո-	A3, գունավոր, լոգոյով, տպագրությունը՝ 4+0	հատ	3000	50	150000

ռում և տպագրություն					
Անվանաքարտի համակարգչային ձևավորում և տպագրություն	1500 մմ x 2500 մմ, տպագրությունը՝ 4+0	հատ	25000	1	25000
Անվանաքարտի համակարգչային ձևավորում և տպագրություն	1300 մմ x 2000 մմ, տպագրությունը՝ 4+0	հատ	20000	3	60000
Սուրճի ընդմիջում	մեկ անգամ, թխվածք, ըմպելիքներ, սուրճ, թեյ	մարդ/օր	1500	130/1	195000
Ճաշի ընդմիջում, 120 անձի համար	մեկ անգամ, 120 անձի համար	մարդ/օր	6500	120/1	780000
Տրանսպորտային ծախսեր	Հուշակոթողներ այցելության նպատակով (Եռաբլուր, Ծիծեռնակաբերդ) 120 մարդու համար անհրաժեշտ է 2 բարձրակարգ ավտոբուս, որոնց ուղեվարձը և սպասելավարձը 1 անձի համար հաշվարկվել են 833.33 դրամ:	ուղերթ	100000	1	100000
Այլ ծախսեր	հուշակոթողներ այցելության համար ծաղկեպսակներ՝ 250-300 մարդու հաշվարկով	դրամ	68000	1	68000
Ընդամենը					3000000

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2010 թվականի
ապրիլի 8-ի N 382 -Ն որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

«ՀԱՅ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՈՐԱԿՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ԽԱՌՆ ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ» ՀԱՄԱԺՈՂՈՎԻ

I. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ներկայումս հայկական սփյուռքում մեծ թիվ են կազմում խառն ամուսնությունները, որոնց հետևանքով զգալի թվով հայեր և նրանց սերունդները հեռանում են ազգային արմատներից, կորցնում հայկական որակները: Այս ամենի հետևանքով լուրջ ծավալի է հասել ուծացման գործընթացը: Խառնամուսնական ընտանիքներում ազգային արժեքների տեղատվությունը, հայապահպանության մեխանիզմների և ձևերի բացակայությունն էլ ավելի են նպաստում ուծացման գործընթացին:

Միևնույն ժամանակ կան նաև խառնամուսնական ընտանիքներ, որոնցում բարձր մակարդակի վրա է հայկական ազգային ինքնությունը, պահպանվում և հարգվում են այնպիսի ազգային արժեքներ, ինչպիսիք են հայոց լեզուն և հայկական մշակույթը:

Համաժողովն անցկացվելու է Երևանում, 2010 թվականի ապրիլի 25-26-ը:

II. ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Համաժողովի հիմնախնդիրներն են՝

1) հայկական և օտար միջավայրերում՝ խառնամուսնությունների հետ կապված հիմնահարցերի քննարկումը.

2) հայկական միջավայրում խառն ամուսնությունների թվի և հետևանքների հետ կապված հարցերի վերհանումը.

3) խառնամուսնական միջավայրում ապրող կամ այլազգիների հետ ամուսնացած հայերի հետ այն հիմնական խնդիրների քննարկումը, որոնք առնչվում են խառնամուսնական միջավայրում ազգային ինքնության պահպանմանը։

III. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ակնկալվող արդյունքներն են՝

1) խառնամուսնական ընտանիքներում հայ ինքնության վրա ազդող այնպիսի գործոնների վերհանումը, ինչպիսիք են հայ եկեղեցու, բազմամշակութայնության և մշակութային երկվության, լեզվական գործոնները.

2) ազգային ինքնության ձևավորման գործընթացը սփյուռքում ներկայացնելը.

3) ընտանիքում՝ ազգային ավանդույթների, սովորույթների պահպանման, փոխանցման և դրսևորման առանձնահատկությունները ներկայացնելը.

4) ազգային ինքնության պահպանման և դրսևորման գործում հասարակության, կրթության և ընտանիքի փոխհարաբերությունների քննարկումը.

5) ազգային ինքնության փոխակերպման, երկմշակույթ ընտանիքներում երեխաների դաստիարակության, ինչպես նաև հայկական ինքնության դրսևորումների և շարունակականության հիմնախնդիրների քննարկումը։

IV. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ մրցութային եղանակով ընտրված կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության պատվերով իրականացնելու է համաժողովի կազմակերպչական աշխատանքները։

V. ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

Համաժողովի կազմակերպման և անցկացման համար պահանջվող գումարը կազմում է 4100000 դրամ:

Ն Ա Խ Ա Հ Ա Շ Ի Վ

«ՀԱՅ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՈՐԱԿՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ԽԱՌՆ ԱՄՈՒՄՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ» ՀԱՄԱԺՈՂՈՎԻ

Անվանումը	Բնութագիրը	Չափի միավորը	Միավորի գինը (դրամ)	Քանակը	Ընդամենը(դրամ)
1	2	3	4	5	6
Նիստերի դահլիճ՝ 2 օրվա համար	նախատեսված՝ 50-70 մասնակցի և 50 հրավիրյալների համար, աթոռների դասավորությունը՝ թատրոն, սուրճի ընդմիջման կազմակերպման հնարավորություն	հատ/օր	190000	1/2	380000
Ծրագրի և մասնակիցների ցանկի համակարգչային ձևավորում և տպագրություն	թուղթը՝ 90 գ, A5 ֆորմատի, էջերի թիվը՝ 20, տպագրությունը՝ 1+1, կազմի թուղթը՝ 260 գ, տպագրությունը՝ 4+0	հատ	1000	100	100000
Համաժողովի նյութերի տպագրություն	200 էջ, A5 ֆորմատի, թուղթը՝ 90 գ, էջերի թիվը՝ 200, տպագրությունը՝ 1+1, կազմը փափուկ, տպագրությունը՝ 4+1	հատ	3000	300	900000
Հրավիրատոմսի համակարգչային ձևավորում և տպագրություն	թուղթ՝ 260 գ, A5 ֆորմատի, տպագրությունը՝ 4+1, ծրարով	հատ	200	100	20000
Ավիատոմս (Վրաստանից ժամանող հյուրի ավտոմեքենայի ուղեվարձ)	սփյուռքահայ մասնակիցներ՝ ըստ տարածաշրջանների (Եվրոպա՝ 2 մասնակից, ԱՊՀ՝ 1 մասնակից,	հատ	250000	5	1250000

	Մերձավոր և Միջին Արևելք՝ 1 մասնակից, Վրաստան՝ 1 մասնակից)				
Հյուրանոցային ծառայությունների մատուցում՝ 5 սփյուռքահայ մասնակիցների համար	4 օրվա համար՝ նախատեսված սփյուռքահայ մասնակիցների համար, մեկ տեղանոց սենյակ՝ համաժողովի դահլիճին մոտիկ	մարդ/օր	28000	5/4	560000
Անվանաքարտեր	չափը՝ 90 մմ x 60 մմ, տպագրությունը՝ 4+0, թաղանթապատ, կախիչով	հատ	300	50	15000
Թղթապանակ	պլաստիկե, միջին չափի՝ A4 չափի նյութերի համար	հատ	800	50	40000
Գրիչ	հասարակ	հատ	100	50	5000
Նոթատետր	թուղթը՝ A5 ֆորմատի, 120 գ, թիվը՝ 25, տպագրությունը՝ 1+0, կազմը՝ A5 ֆորմատի, թուղթը՝ 260 գ, տպագրությունը՝ 4+0	հատ	1 000	50	50000
Անվանաքարտի համակարգչային ձևավորում և տպագրություն	2000 մմ x 3000 մմ, տպագրությունը՝ 4+0	հատ	25000	2	50000
1	2	3	4	5	6
Սուրճի ընդմիջում	մեկ անգամ, թխվածք, ըմպելիքներ, սուրճ, թեյ	մարդ/օր	1500	50/2	150000
Ճաշ	օրական մեկ անգամ	մարդ/օր	4000	50/2	400000
Տրանսպորտային ծառայություն	Երևան քաղաքի տարածքում (բարձրակարգ՝ 50 նստելատեղով ավտոբուսով հուշակոթողներ այցելություն)	ուղերթ	80000	1	80000
Տրանսպորտային ծառայություն	դիմավորում և ճանապարհում՝ «Զվարթնոց» միջազգային օդանավակայանից մինչև հյուրանոց՝ Երևանում (ներառյալ օդանավակայանի տարածքում կայանելու և վերադարձի գումարը՝ թեթև մարդատար ավտոմեքենայով)	ուղերթ	7000	5	35000
Այլ ծախսեր	ծաղկեպսակ, ծաղիկներ	դրամ	65000	1	65000
Ընդամենը					4100000

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 4
ՀՀ կառավարության 2010 թվականի
ապրիլի 8-ի N 382 - Ն որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

«ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎԻՃԱԿԸ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ» ՀԱՄԱԺՈՂՈՎԻ

I. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ներկայումս սփյուռքում առկա են արևմտահայերենի ուսուցման մի շարք խնդիրներ։

Առաջինը՝ արևմտահայերենի միասնական դասագրքի բացակայությունն է։ Այնուհետև՝ գոյություն ունեն լուրջ հիմնախնդիրներ արևմտահայերենի ուսուցման գործում՝ կապված համապատասխան մեթոդաբանության բացակայության կամ թերի մեթոդաբանության առկայության հետ։

Շատ կարևոր խնդիր է նաև արևմտահայերենի ուսուցիչների պակասը և նրանց վերապատրաստման հետ կապված հիմնախնդիրների առկայությունը։

Համաժողովն անցկացվելու է Ծաղկաձորում, 2010 թվականի մայիսի 29-31-ը։

II. ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Համաժողովի հիմնախնդիրներն են՝

1) սփյուռքում՝ արևմտահայերենի ուսուցման հետ կապված հիմնահարցերի քննարկումը.

2) արևմտահայերենի միասնական դասագրքի ստեղծման հետ կապված հիմնահարցերի վերհանումը.

3) սփյուռքում արևմտահայերենի ուսուցման մեթոդիկայի զարգացման համար արդյունավետ մեխանիզմների մշակումը։

III. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ակնկալվող արդյունքներն են՝

1) սփյուռքում՝ արևմտահայերենի ուսուցման հետ կապված հիմնախնդիրների բացահայտումը.

2) արևմտահայերենի ուսուցման հետ կապված հիմնախնդիրների լուծման ուղի-ների ու միջոցների վերաբերյալ առաջարկությունների մշակումը.

3) արևմտահայերենի ուսուցման հետ կապված հիմնախնդիրների լուծմանը նպաստող ծրագրերի մշակումն ու իրականացումը։

IV. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԿԶԲՈՒՆՔԸ

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ մրցութային եղանակով ընտրված կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության պատվերով իրականացնելու է համաժողովի կազմակերպչական աշխատանքները։

V. ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

Համաժողովի կազմակերպման և անցկացման համար պահանջվող գումարը կազմում է 6300000 դրամ։

Ն Ա Խ Ա Հ Ա Շ Ի Վ

«ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎԻՃԱԿԸ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ»
ՀԱՄԱԺՈՂՈՎԻ

Անվանումը	Բնութագիրը	Չափի միավորը	Միավորի գինը (դրամ)	Քանակը	Ընդամենը (դրամ)
1	2	3	4	5	6

Նիստերի դահլիճ՝ 2 օրվա համար	նախատեսված՝ 30-50 մարդու համար, աթոռների դասավորությունը՝ թատրոն, սուրճի և ճաշի ընդմիջումների կազմակերպման հնարավորություն	հատ/օր	100000	1/2	200000
Համաժողովի ծրագրի և մասնակիցների ցանկի համակարգչային ձևավորում և տպագրություն	թուղթը՝ 90 գ, A5 ֆորմատի, էջերի թիվը՝ 20, տպագրությունը՝ 1+1, կազմի թուղթը՝ 260 գ, տպագրությունը՝ 4+0	հատ	1000	100	100000
Ավիատոմս	սփյուռքահայ մասնակիցներ՝ ըստ տարածաշրջանների (Հյուսիսային և Հարավային Ամերիկաներ՝ 2 մասնակից, Եվրոպա՝ 2 մասնակից, ԱՊՀ՝ 4 մասնակից, Մերձավոր և Միջին Արևելք՝ 2 մասնակից)	հատ	250000	10	2500000
1	2	3	4	5	6
Հրավիրատոմսի համակարգչային ձևավորում և տպագրություն	թուղթը՝ 260 գ, A5 ֆորմատի, տպագրությունը՝ 4+1, ծրարով	հատ	200	100	20000
Հյուրանոցային ծառայությունների մատուցում Ծաղկաձորում՝ 40 մարդու համար	2 օրվա համար, համաժողովի մասնակիցների համար, մեկտեղանոց	մարդ/օր	23500	40/2	1880000
Հյուրանոցային ծառայությունների մատուցում Երևանում՝ 2 օրվա համար	համաժողովի սփյուռքահայ մասնակիցների համար, մեկտեղանոց	մարդ/օր	25000	10/2	500000
Անվանաքարտեր	չափը՝ 90 մմ x 60 մմ, տպագրությունը՝ 4+0, թաղանթապատ, կախիչով	հատ	300	50	15000
Թղթապանակ	պլաստիկե, միջին չափի՝ A4 չափի նյութերի համար	հատ	800	50	40000
Գրիչ	հասարակ	հատ	100	50	5000
Նոթատետր	թուղթը՝ A5 ֆորմատի, 120 գ, թիվը՝ 25, տպագրությունը՝ 1+0, կազմը՝ A5 ֆորմատի, թուղթը՝ 260 գ, տպագրությունը՝ 4+0	հատ	1000	50	50000
Անվանաքարտի համակարգչային ձևավորում և տպագրություն	2000 մմ x 3000 մմ, տպագրությունը՝ 4+0	հատ	25000	1	25000
Սուրճի ընդմիջում	մեկ անգամ, թխվածք, ըմպելիքներ, սուրճ, թեյ	մարդ/օր	1500	50/2	150000
Սննդի	նախաճաշ, ճաշ, ընթրիք՝ 40 հոգու համար	մարդ/օր	4600	50/3	690000

սպասարկում					
Տրանսպորտային ծառայություն	Երևան-Ծաղկաձոր-Երևան (բարձրակարգ՝ 50 նստելատեղով ավտոբուսով)	ուղերթ	70000	1	70000
Այլ ծախսեր (հուշակոթողներ այցելության ժամանակ ծաղիկներ ձեռք բերելու համար)	հուշակոթողներ այցելության ժամանակ ծաղկեպսակներ ձեռք բերելու համար	դրամ	55000	1	55000
Ընդամենը					6300000

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ